# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

15 հուլիսի 2024 թվականի թիվ 78-Ա

ք. Երևան

## «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասի, «Լիցենզավորման մասին» օրենքի 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ընկերության ռադիոծրագրի եթերային հեռարձակման N 245 լիցենզիայի կրկնօրինակը տրամադրելու մասին 2024 թվականի հուլիսի 1-ի հայտը և ի լրումն հայտի հուլիսի 11-ի գրությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց՝***

1. Բավարարել հայտը և «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ընկերությանը տրամադրել 2017 թվականի հոկտեմբերի 5-ի ռադիոծրագրի եթերային հեռարձակման N 245 լիցենզիայի կրկնօրինակը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ընկերությանը ծանուցելուց մեկ օր հետո:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2024թ. հուլիսի 15
ք. Երևան